ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆԻՆ՝ ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ
ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆԻՆ

ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ, ՎԱՇԻՆԳՏՈՆ

Ի խորոց սրտի շնորհավորում ենք Ձերդ Գերազանցությանը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

Ընտրություններում Ձեր հաղթանակը Միացյալ Նահանգների ժողովրդի կողմից Ձեր նկատմամբ դրսևորված վստահության պերճախոս արտահայտությունն է:

Մենք աղոթք ենք առաքում առ Աստված, որ Բարձրյալը Ձեզ շնորհի աստվածային իմաստություն և պարգևի արիություն՝ ամենայն պատասխանատվությամբ շարունակելու հետագա գործունեությունը բարձրագույն պատասխանատվության Ձեր պաշտոնում:

Մեր հիշողության մեջ վառ է մնացել անցած հունվարին կայացած Ձերդ Գերազանցության հետ Մեր հիշարժան հանդիպումը, երբ Մեր անդրանիկ հովվապետական այցը տվեցինք Միացյալ Նահանգների Հայ համայնքին:

Մենք համոզված ենք, որ Ձեր պաշտոնավարության հետագա չորս տարիների ընթացքում Դուք կշարունակեք բարեկամական հարաբերությունները մեր Հայրենիքի ազատ, անկախ պետության և նրա ողջ ժողովրդի հետ:

Իմ կողմից անձնապես և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Ամենայն Հայոց Կաթողիկոսության անունից մաղթում եմ Ձեզ և Ձեր ընտանիքին քաջառողջություն, Ձեր ժողովրդին և պետությանը՝ հետագա բարգավաճում:

Սիրով և աղոթքներով՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
6 նոյեմբեր 1996 թ.